



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 12807

Փետրուար 15, 1966

Հոգեշնորհ
Տ. Միլոոն ծ. վրդ. Կրճիկեան
Հոգեւոր Հովիւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
Եւ Նախագահ Ռատուարժան ծիական Խորհուրդի
Ուսար.

Սիրելի Հայր Միլոոն.

Ստացած ենք Ձեր 1966 Փետրուար 10 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 20ին գումարուած
Ձեր Տարեկան ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի մաս-
նակի ընտրութիւն, եւ ներկայացնելով բուհարկութեան արդիւնքը, կը
խնդրէիք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անդամ ծիա-
կան Խորհուրդի.

- Տիարք՝ Թորգոմ Խուլօեան
- Չարլզ Շարիկեան
- Փիթըր Նալպանտեան
- Բարզէն Անսպիկեան
- Պարթեւ Տ. Պաղասասարեան
- Սէթ Պիլէգերեան

Կը յանձնարարենք որ Ձեր ծիական Խորհուրդի նոր դիւանի անուն
հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան ասրի
մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ անատայի